չէր. երեւի պատճառներ ունէր Հրանտը: Ես բախտ եմ ունեցել Հրանտի հետ տարբեր առիթներով շփուելու եւ թատրոնում, եւ կինոյում: Նրա հետ գրուցելը, անկախ առիթներից, միշտ հարստացնում էր զրուցակցիս: Երբ նեղն եմ ընկել խօսքի, մտքի պակասից, միշտ դիմել եմ Հրանտին: Յիշեմ, երբ «Սարգսեան եղբայրներ» կինոնկարի սցենարն էինք գրում Ֆրունզէ Տովլաթեանի հետ, զանգեցի Հրանտին, խնդրեցի օգնել: Շատ պատրաստակամ յանձն առաւ եւ գրեց գերեզմանոցի տեսարանը, որի խօսքը շատ է տարբերում սցենարի միւս հատուածներից, ունի Հրանտին յատուկ պարզութիւնը, խորութիւնը, մտքի սրութիւնը:

Հրանտը մեծ անձնաւորութիւն էր: Նրա մասին դեռ շատ է խօսուելու, գրուելու: Ես խոր ցաւ եմ ապրում, որ ինչ-որ բան կիսատ մնաց: Հրանտի գնալով՝ մի բան պակասեց: Բայց դա բնորոշ է բոլոր մեծերին, ինչ-որ մի բան միշտ կիսատ է մնում մեծերի կենսում, ինչ ազգի էլ պատկանեն, ինչ երկրում էլ որ ապրեն: Բայց այն, ինչ թողել է Հրանտը, այնքան շատ է, այնքան պայծառ, որ երկար ու երկար տարիներ մեզ լուսաւորելու է, ուժ է տալու, պայքարի է կոչելու:

Գնաս բարով, Հրանտ, դու գնում ես անմահութիւն: Եւ դրանով իսկ միշտ մեզ հետ ես լինելու:

ԽՈՐԵՆ ԱՐԱՎԱՍԵԱՆ

ԴԵՊՈՒՆ ԵՐԱԶԱԳԻՐ ԼԵԱՌՆ ԱՐԱՐԱՍ

Շփոթի ու մոլորքի մէջ, առանց քո հաշտարար ներկայութեան, ուզում եմք հաշտուել կորստիդ հետ, եւ ապարդիւն է նկատուր մեր ջանքը:

Աւելի ուշ՝ մահուանից հեքքական տարելիցներին, երբ այսքան սգակոկորդ չենք լինի, այսքան փխրափխր ու փղձկացող, ներդաւմտութեանց ներքոյ արդէն անցիկ կը վայելենք քո Բացակայութեան հացն ու զինից: Ու կը գործանք էլի, ու դարձաւ կը սքանչանանք քեզնով, սքանչելի Գրչապէս է:

Իսկ հիմա՝ ներումնահայց այս օրը, բող որբավարի ծուարները շուշուրեանդ ստուերում եւ Հրանտահունչ շարակնոց թերթերը սուտուփուս:

Իգնատիոսի որդի՛, ամենայն հայոց Զաւակ, այսահարուած խոզերին իսկ չխնայեցիր մարգարիտները, որ չարքաբափ լինեն գուցէ՛ չարաօրափ, ու չհարմուեն Հայոց խղիւնները, չխնայեցիր ի փառս Մեսրոպատան հրաշագործութեան, որ անխժոճանք երկրիդ ջղի փառքն է նաեւ:

Միբելի Յաւիտեան որդ, Մեծամորից ու Լոռուց մինչեւ Սեւինք ու Արցախ, ներկի մեր երկրի բոլոր լայնութիւններում եւ ծովերից ծով Սփիւրում մեր, մեր հոգեւորութեան տիեզերագաշտով մէկ չենք

ասում՝ բարո՛վ գնաս, այլ անագնացող հրաժեշտի ձայնով շեփորում ենք ու թմբկահարում. դա բո՞ղ բարի, առաքեալ հոգի՛, բարի վերադարձ՝ հայրենական հող, որպէս գալիք ու գալիք հուճեքի սպասուոր շատիկ:

Քո հրահրած անյագուրդ կարօտից բխող սրբագան արցունքը՝ անմահական ջուր, եւ Լուսաւորչի կանթեղալոյսը թող քեզ փարոս լինի՝ դէպի երազագիր լեռն Արարատ:

ՀՐԱՉԵԱՅ ՍԱՐՈՒՍԵԱՆ

ԾՄԱԿՈՒՏԻ ՏԷՐԸ

Որրանում ենք ու նմանում մայայցող անտառի, որտեղ ցաւալիօրէն բացատն արդէն աւելին է, քան՝ ծառը: Հրանտ Մաթեւոսեանն այն կաղնիներից էր, որ գրական աշխարհ եկաւ 60ականներին, եկաւ եւ անմիջապէս հաստատեց իր տեղը, յայտարարեց իր գոյութեան մասին: Այդ յայտարարութիւնն «Ահնիծոր» ակնարկն էր, գրուած գիւղական պարզութեամբ ու ճշմարտացի, երիտասարդական ըմբոստ պոռթկումով, որը ժամանակի իշխանական գաղափարախօսութեան դիմադրութեան էր հանդիպելու: Մի նոր, ինքնատիպ աշխարհ էր մուտք գործում գրականութիւն, տաղանդաւոր մի գրող՝ լեցուն պատմութիւններով ու ասելիքով, ժողովրդի հոգեւորութեան ու կենսակերպի անաղարտ պատմումով:

Ահնիծորը ո՛չ միայն ծննդավայրն էր Հրանտ Մաթեւոսեանի, «Ահնիծոր»ը սկիզբն ու ծնունդն էր նրա գրականութեան, գրողի գրական հայրենիքը:

Թուում էր, թէ Հրանտ Մաթեւոսեանը գրում է անընդհատ, ամէն քայլափոխին, խօսելիս ու լռելիս, քայլելիս ու քէֆի սեղանի շուրջ: Բնագիր էր այդ ամէնով հանդերձ: Հաւանաբար, դժուար էր գրում: Ինքնայրուումով, մտքերի ու մտորումների երկար տանջանքից յետոյ: Գրում էր տառապանքով, որովհետեւ գրում էր ցաւի մասին, մարդու հոգի պղծելով, ժողովրդի ու հասարակութեան հոգեբանութիւնն անտորոշելով:

Միշտ անդաւանաւ մնաց այն պատասխանատուութեանը, որ կրում էր իր ժողովրդի եւ ընթերցողի առջեւ: Զգիտեմ, հասցնում էր նա թղթին յանձնել իր մտորումները Գրողների Միութիւնում պաշտօնավարելու բարդ տարիներին եւ ընդհանրապէս վերջին շրջանում: Երանի՛ գրած լինէր մեր ապրած կեանքի այս ժամանակների մասին:

Մենք կողորհեք մեծ գրողի եւ մեծ մարդու: Նա եկաւ, արարեց իր ինքնատիպ աշխարհը, թողեց այն իր ժողովրդին՝ ի վայելումն, ու գնաց: Գնաց դէպի անմահութիւն: Որբացանք եւս մէկ անգամ:

ԳԱԽԹ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրէն

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐԻ ԱՍՍՅՈՂԸ

Քիչ են գրողները, որ իրենց աշխարհն ունեն այս աշխարհում: Եւ աւելի քիչ են նրանք, որ իրենց աշխարհի փառքով շուսալու ու շուսեցել փորձելու փոխարէն նրա խիղճն են բերում այս աշխարհին նուր ու որդիական այնպիսի հեղուքեամբ են բերում, որ աշխարհի հզօրների աչքին խեղճութիւն է թոււմ երբեմն:

Երբ Հրանտը խօսում էր, նա չէր ասում բառեր, բառեր, բառեր: Իր «անհամարձակ» խօսքով նա համարձակում էր մեր յորդի ամենաբարուն խորքերում ծուարած անխոստովանելի խոստովանել: Երբ Հրանտը գրում էր, մենք ունենում էինք գրուածին հաւատալու՝ այն օրերին դժուար գտանելի երջանկութիւնը:

Դեռ գրելիք ունէր, դեռ ասելիք ունէր Հրանտը իր երկրին ու ժողովրդին, այն քչերից, այն շատ քչերից էր նա, ով ունէր այդ ամենակարեւոր ասելու իրաւունքը:

Ու հիմա ոչ միայն գրողներին, ոչ միայն մտաւորականներին, այլեւ ամբողջ ժողովրդին է որքի գոցացումը մեզ էլ ով պիտի, թող որ ինքն էլ այդպէս էլ գլուխ չհանցնելով այդ մեծ, այդ տար ու, չգիտես ինչպէս, այդ միշտ «ձիշդ» աշխարհից, հարագատի սրտմտութեամբ յորդորի, թէ ունէր զեղեք, տէ՛ր եղեք ձեր երկրին ու ձեր կեանքին:

ՀԵՆՐԻԿ ԲԱՆՉԻՆԵԱՆ

Եղիշ Չարեցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարանի տնօրէն

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՄ


ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ԾՆՈՂՆԵՐՈՒ, ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԻՆՔՆԱՏԻՊ ԿԱՅՔԵՐ



Արհեստագիտական էջով յաճախ անդրադարձած ենք փոքրիկներու նուրբուած ժամանցի եւ դաստիարակչական կայքերու: Ստորեւ տրուած կայքերը, պահելով հանդերձ իրենց դաստիարակչի բնոյթը, կը զատորոշուին այլ կայքերէ՝ իրենց առանձնաշատուկ պարունակութեամբ:

● www.ucalgary.ca/dkbrown
Փոքրիկներու յատուկ նորագոյն գիրքերու ներկայացում եւ գրախօսականներ, ինչպէս նաեւ համացանցին վրայ տեղադրուած փոքրիկներու գիրքերու



կայքեր:
● www.pbs.org/wgbh/nova/decoding
● www.thunk.com

Վերոնշեալ կայքերը այցելող պատանիներ կրնան օգտուիլ Համաշխարհային Երկրորդ Պատերազմին օգտագործուած ծածկագրումի արհեստագիտութեան՝ իրենց բարեկամներուն հետ գաղտնագիրներ փոխանակելով:

● www.funbrain.com
Բազմաթիւ խաղեր, հանելուկներ, հարցարաններ մտքի մարզանք սիրող պատանիներու եւ չափահասներու համար:
● www.funschool.com
Դաստիարակչական խաղեր փոքրիկներու համար:


ՕՐՈՒՄՆ ԼԱԻՍԳՈՅՆ ԿԱՅՔԵՐԸ

Որեւէ ամսուան, շաբթուան թէ օրուան լաւագոյն, կամ գէթ ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող կայքերը ճանչնալու եւ անոնց պարունակութիւնը ըմբռոյնելու համար համացանցին վրայ գտնուած «Ուղեցոյց» կայքեր աւելի քան օգտակար կրնան ըլլալ:

Արդարեւ, փնտռուողի համակարգերով (սրբէնցի) ձեռքբերուած առաջին տարը կամ քսան կայքերու մէջ չգտնուող կայք մը չի նշանակեր, թէ տուեալ թեմայով լաւագոյն կայքերու կարգին չի դասուիր: Հետեւաբար կ'արժէ պարբերաբար այցելել ստորեւ տրուած կայքերը եւ ծանօթանալ համացանցի վրայ օրուան ամէնէն աւելի սիրուած եւ փնտռուած կայքերուն:

● www.top100.com.au
- Ամէնէն աւելի այցելութիւններ ստացած շաբթուան 100 կայքերը ներկայացնող այս կայքը դասաւորումներ կը կատարէ նաեւ ըստ թեմայի: Նմանօրինակ կայքերու ներկայացուցած դասաւորումը ընդհանրապէս ճշգրիտ կ'ըլլայ: Սակայն նշենք, որ «պրառզըր սթարթափ» էջերը, կայքերու «անուղղակի» այցելութիւններ տալով տուեալ ճշգրտութիւնը կրնան որոշակի կերպով խախտել:


Վերոնշեալ կայքին տուած արդիւնքները կարելի է բաղդատել www.alexa.com կայքին հետ: Եւ կամ՝ պարզապէս ըմբռոյնել ներկա-



յացում 100 կայքերուն մէջ ձեռնարկուած թեմայով կայքերը...
Օրական դրուածքներ հետաքրքրական կայքեր ներկայացնող հասցէ մըն է www.memepool.com: Ըստ թեմայի դասակարգուած եւ հետեւողական

կար եւ ժողովրդականութիւն վայելող կայքերը ըմբռոյնելէ ետք ինչո՞ւն աւելարկ մը չենտել համացանցի ամէնէն «անպիտան» կայքերուն:

● www.go2net.com/useless ԵՆ




նօրէն վերաթարմացուող այս կայքին կ'աշխատակցին բազմաթիւ մեկնաբաններ:

Շաբթական դրուածքներ կայքեր «Կը գրախօսէ» www.netsurf.com/nsd կայքը: Հետաքրքրական կայքեր ներկայացընող այլ կայք մըն է www.toptenlinks.com: Համացանցի օգտա-

www.worstoftheweb.com հասցէով կայքեր կրնան գոհացում պատճառել համացանցին վրայ ամէնէն «անպիտան» կայքերը տեսնելու մարմաջը ունեցողներուն: Սիրտը աւելի զօրաւոր եղողներ կրնան այցելել աւելի ցնցիչ կայքեր ներկայացընող «կայան» մը՝ www.portalofevil.com:

ՇՆՈՐՀԱՌՈՐԱԿԱՆ ԵԼԵԿՏՐՈՆԻԿ ՔԱՐՏԵՐ




Տօնական այս օրերուն ելեկտրոնային միլիոնաւոր քարտեր կ'ուղարկուին համացանցի միջոցով՝ աշխարհի տարբեր կողմերը կամ՝ նոյնիսկ կողքի շէնքը բնակող հարազատներու եւ բարեկամներու...

Ստորեւ կը ներկայացնենք փունջ մը կայքեր, որոնք ձրիօրէն ելեկտրոնային շնորհաւորական քարտեր ուղարկելու առիթ կ'ընծայեն իրենց այցելուներուն:

- www.e-cards.com
- www.electronic-greetings.com
- www.greeting-cards.com
- www.123greetings.com
- www.cardmaster.com
- www.cardcentral.net
- www.gcards.com
- www.hallmark.com
- www.greetings.yahoo.com
- www.ynot.com

ԺՊԻՏՆ ՈՒ ԾԻԾԱՂԸ ՀԱՄԱՅԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Ստորեւ կը ներկայացնենք հարիւրաւոր կատակներ պարունակող կայքեր, որոնք իրենց մասին խօսիլ (եւ խնդր) տուին 2002ին:

- www.humordatabase.com
- www.humournet.com
- www.humor.com
- www.goofball.com
- www.looniebin.mb.ca

ԱՖՀԻԼ AFHIL
ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՄ
AT HOME
• Wheelchair
• Walker
• Electric Bed
• Manual Bed
• Water Mattress
• Cans
• Sticks
• Serum Tripod
• Walking Frame
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES
ՅՈՒՑԱՍՐԱՐՇ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԷՏԻ ՇԵՆՔ, Բ. ՅԱՐԿ (ԵՆԻ 101) 242556/7
NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

EURO STYLE
Salon for Men European Specialists
Առաջին անգամ ըլլալով Լիբանանի մէջ
Haircut+Hairwash+Brushing 12,000 LL
Haircut for kids 8,000 LL
Hairwash+Brushing 5,000 LL
Highlighting 25,000-30,000 LL
Hair Coloring 25,000 LL
Head Massage 8,000 LL
Bain d'huile 5,000-8,000 LL
Permanent Curls 25,000-30,000 LL
Christmas offer until January 10 - 2003 50% discount
Հայկաի հրապարակ, Լադաբայից Գրանց BREEZEVALE HOUSE Mediterranean դրամատակ կից, Ա. յարկ, հեռ. : 01 / 892081

Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ
Հարասնեկան Բարբերորու Անի Հարսիւծոյ
Հարպոյեան Կեդրոն - Գ. Համուտ Հեռ. : 01-253008

ԿԻԼԻԿԻԱ
ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏԵԼԱԶԱՐԷՆ 6 ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՒՆԱՊԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՆ ԵՆ ՀԱՆՈՒԻ ՆՈՒՐԸ
ՍՈՒՐԱՐՇ ԳՐԱՍԵՆՆԱԿ
ՀԱՐՔԵՐԸ
ՓՈՒՆԵՐՈՒ
ՍՈՒՐԱՐՇ ԳՐԱՍԵՆՆԱԿ
ՍՈՒՐԱՐՇ ԳՐԱՍԵՆՆԱԿ
ՍՈՒՐԱՐՇ ԳՐԱՍԵՆՆԱԿ

Մանկապատանեկան

ԳԻՏԵՊՐ ԹԵ

ԿԱՂԱՆԴԻ ՄԱՍԻՆ...

Կաղանդի տօնը շատ հարուստ է տարբեր տեսակի պատմութիւններով, տիպարներով, սովորուածներով... Ահա, անոնցմէ քանի մը հատը:

ՊԱՊՈՒՇՔԱ

Շատ հին ժամանակներուն, ձմեռնային պահ գիշեր մը, նուէրներով ծանրաբեռնուած երեք օտարներ կը գարնեն ռուս ծերուկ մամայի մը դուռը: Անոնք օգնութեան պէտք ունին, բայց Պապուշքա կը մերժէ օգնել անոնց: Սակայն, ան կը զղջայ եւ կը փորձէ անոնց ետեւէն հասնիլ՝ խաղալիքներով լեցուն կողովով մը: Դժբախտաբար անոնց հետքերը

լուծեն՝ ծաղրելով զայն եւ զայն ներկայացնելով իրրեւ շար, ցնցոտիներ հագած, մտրակ մը ձեռքին մարդուկ մը:

Այդ օրուներէ ի վեր «Ֆուէթար» (մտրակով ծեծող) պ ա պ ու կ ի ն առասպելը կը ծնի: Ան կը վախցնէ բոլոր անհասկանալի փոքրիկները, որովհետեւ ան կրնայ զանոնք պատժել զաւագանի քանի մը զարկով, կամ աւելի՛ գէշ՝ նուէրներէ զրկելով զանոնք:



ԿԱՂԱՆԴԻ ՊԱՐԻԿՆԵՐԸ

Կաղանդի պարիկները յաճախ կը կոչուին նաեւ «ճերմակ տիկիններ»: Անոնք ունին փոքր կտտոշներ, միշտ ծպտուած են եւ յաճախ աղամանդէ թագ մը ունին իրենց գլխուն:

Անոնք կը մտնեն ծխնելով գէշ կամ բաց պատուհանէ մը՝ բարի պատիկներուն նուէրներ բերելու համար:

ռին:

Հետագային, Ալգասի մէջ մարդիկ իրենց տուններուն մէջ դրին կաղանդի եղեւիներ: Անոնք զայն կը զարդարէին պոնպոններով: Երբ անոնք ծառը կը շարժէին, պոնպոնները կը թափէին՝ պատիկներուն մեծ հաճոյք պատճառելով:

ՄՈՄՏԵՐԸ

Աշխարհի գրեթէ բոլոր շրջաններուն մէջ, սովորուած է կաղանդի գիշերը վառել մեծ մոմ մը, որ վառած պիտի մնայ ամբողջ գիշերը, եւ դարձեալ ամէն օր պիտի վառի մինչեւ Յունուար 6: Կրակարանին մէջ այ-



կորսուած էին ձիւնին սակ:

Այդ օրուներէ ի վեր, Պապուշքա կ'օգնէ սառնամանիք պապուկին՝ իր շրջապատը կատարելու ամբողջ Ռուսիոյ մէջ, 31 Դեկտեմբերի գիշերը:

«ՖՈՒԵԹԱՐ» ՊԱՊՈՒՇՔԸ

1552 թուականին, գերման կայսր եւ Սպանիոյ թագաւոր Շարլ Գէնթ իր բանակը կը դրկէ Մէքսիկոյ քաղաքին վրայ յարձակելու: Այս քաղաքին բնակիչները թագաւորէն իրենց վրէժը կը

ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌԸ


Միջնադարեան ժամանակաշրջանին, երբ մարդիկ կը տօնէին Յիսուսի ծնունդը, անոնք եղեւիները կը կախէին խնձորներ, զանոնք խնձորենիներուն մասնցնելու համար: Անոնք կ'ըսէին, թէ այսպիսով իրենց եղեւիները կը նմանէին դրախտի ծա-



րող ծառի կոճղին լոյսին նման, մոմը կը լիչեցնէ արեւուն ջերմութիւնը եւ լոյսը:

ԽԱՂԱՍԸ

ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐԸ




Ա.- ՉՈՅԳԵՐԸ

- 5, 7, 9 խաղացող նշանակեցէք գաղտնի ոստիկան մը եւ զայն սենեակէն դուրս հանեցէք:

Կազմեցէք զոյգերը: Իւրաքանչիւր զոյգ գաղտնորէն կը համաձայնի իրարու ճանաչումի նշանի մը, քիթը քերել, լեզուն շրթունքին վրայէն անցնել, ձեռքերը մագրուել մէջը...

Ամէն մարդ պատրաստ է: Գաղտնի ոստիկանը մտցուցէք: Երբ նշանը կը տրուի, ամէն մարդ խօսելու կը սկսի եւ գաղտնի ոստիկանը կ'ուսումնասիրէ նստողները: Իւրաքանչիւրը իր նշանը կ'ընէ երեք ան-



գամ, շատ խորհրդապահօրէն: Մէկ վայրկեանէն գաղտնի ոստիկանը պէտք է ճանչնայ նշանը եւ նշանակէ զոյգերը:

Բ.- ԿՈՅՐԵՐԸ

- 4 խաղացող եւ աւելի: Թի-շըրք եւ կարճ տարատ հագուած խաղացողները իրենց հագուստները կը վստահին դերձակի մը, որ սկիզբէն նշանակուած պիտի ըլլայ, վիճակ ձգելով:

Ապա, խաղացողները իրենց աչքերը վզկապով մը կը գոցեն: Դերձակը ամէն ինչ կը խառնէ. շապիկներ, փէշեր, տարատներ, կօշիկներ... եւ հագուստներու մեծ դէզ մը կը կազմէ:

Այս դէզին առջեւ կանգնած «մերկ» խաղացողները 50 երկվայրկեանէն պէտք է հագուին իրենց ձեռ-



քերուն տակ գտնուած հագուստները: Երբ ժամանակը վերջանայ, նուազ հագուած անձը պէտք է ընէ իրմէ պահանջուածը:

Գ.- ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԻՆ



- 2 խաղացող եւ աւելի: Խաղացող մը կը նշանակուի պատրաստելու համար միւս խաղացողներուն իրեն հարցուցած հարցումներուն:

Սակայն, ան պէտք է պատասխանէ առաջին հարցումին, երբ երկրորդ խաղացող մը երկրորդ հարցումը հարցնէ իրեն...


Ի՞նչ կը կոչուի միթէյ մաուսին շնիկը... ո՞վ է սիրած երգիչը: Պատասխան, Փլուքօ: Ուշադրութիւն, պէտք է ծուղակին մէջ իյնալ: Կեդրոնացիր՝ ճիշդ վայրկեանին պատասխանելու համար: Հարցումները շատ արագ կը թափփին:

ՉԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ


Մեր նախորդ շաբթուան թիով, կամքէ անկախ պատճառներով դուրս մնացած էին ձեռային աշխատանքի բացատրական պատկերները: Ստորեւ կը ներկայացնենք զանոնք:



Կաղանդ պապուկը



Չանգակը




Հիւսիսային եղջերուն



Գուլպաներու երիզը



Պատուհաններն ալ



Ծառիկ փայլփլուն լոյսերը

Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՉԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԸ

ՊԶՏԻԿ ՆՈՒԷՐՆԵՐ



րակ ժապաւէնի, շոֆֆիլա մոմերու:

Ի՞նչ պէս


Տուփերը զարդարէ՛ գունաւոր խաւաքարտերով: Պզտիկ թուղթերու վրայ գրէ մաղթանքներ եւ զանոնք գոցէ ժապաւէն մը փաթեթելով: Իւրաքանչիւր տուփի մէջ զետեղէ մաղթանք մը եւ մոմ մը:

Իւրաքանչիւր հիւրի կրնա նուիրել պզտիկ անձնական մոմակալ մը: Անոր մէջ պիտի պահես պզտիկ մաղթանք մը: Զայն պիտի հանես մոմը վառելէ առաջ: Իսկ երբ մոմը մարի, կրնայ մաղթանքը իրականանալ...




Պէտք ունիս Պահածոյի երկաթէ պզտիկ տուփերու, գունաւոր թուղթերու, բա-

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆՆԵՐԻ ՖՈՒԹՊՈՒԼ ՍԽՈՅՆԵՐՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ Հ.Ս.Ը.Ս. - Հ.Ս.Ս.

Լիբանանի ֆուտբոլի ֆուտբոլիստներն 9րդ հանգրուանի մրցումներում, գազաթի ճակատում տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, ուր Հ.Ս.Ը.Ս.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը կեսորէ ետք ժամը 2:15ին կը հիւրընկալէ Հ.Ս.Ս.ը:

Ընդհանուր դասաւորման պարագուծի դիրքը գրաւող եւ առաւելագոյն 21 կետերը ապահոված Հ.Ս.Ը.Ս. այժմ հինգ կետի առաւելութիւն մը ունի Հ.Ս.Ս.ի վրայ:

Հ.Ս.Ը.Ս.ի համակիրներէն կը սպասուի, որ ինչպէս նախորդ մրցումները, խուռներամ դաշտ ներկայանալ եւ քաջալերել իրենց խումբը՝ ուշադիր ըլլալով որ իրենց ակումբին ոչ մէկ վնաս հասնի:

Ստորեւ՝ 9րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 2:15ին).

●ԱՅՍՕՐ	Պ. Համուտ
Ռասինկ - Նահատ	Թրիֆոլի
Շապապ Թրիֆոլի - Մահապապ	Սաֆա
Շապապ Խրամ - Ռիատա Ուալ Ատապ	

●ՎԱԳԸ
Մաթուլ Այնճար - Թատ. Նապաթիէ
Հ.Ս.Ը.Ս. - Հ.Ս.Ս.
Իսլահ - Ահլի Սայտա

ՆԱԽԱՐԱՐ ՍԵՊՈՒՀ

ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ

ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց Լիբանանի պատերազմի ֆետրապիստի նախագահ Ժան Համամը, Արեւմտեան Ասիոյ պատերազմի ֆետրապիստի ընդհանուր քարտուղար Յակոբ Խաչերեանը եւ Սաժէս ակումբի նախագահ Անթուան Շուէրին:

ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ԴԱՍԸՆԹԱՅԸ

«ԱՂԲԱԼԵՆ - Հ.Ս.Ը.Ս.»
ՄԱՐԶԱՄԵՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱԼԻԲԵՆ ՆԵՐՍ

Փորձեր՝ ամէն Շաբաթ օր կեսօրէ առաջ ժամը 9:00էն 11:00 եւ 11:00էն կեսօրէ ետք ժամը 1:00, ըստ տարիքային բաժանումի:

Մարզիչ՝ Լիբանանի ֆինկ փոնկի ֆուտբոլիստ Լիճա ՊԱՐԻԿԵԱՆ:

Արձանագրութիւն՝ մինչեւ 10 Յունուար, ամէն երեքշաբթի եւ Հինգշաբթի, «Աղբալեան - Հ.Ս.Ը.Ս.» մարզաձաշակութային համալիր կամ հեռաձայնել՝ 03-262691 թիւին:

Հ.Ս.Ը.Ս. ԱՆԹԻԿԱՍԻ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼ ՍԽՈՅՆԵՐՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ ԱՐՍԵՆԱԼ - ԼԻՎԵՐՓՈՒԼ



Արսենալի մարզիչ Արսէն Վենցեր, որ ինքնավստահ է իր կազմէն

Անգլիոյ ֆուտբոլի բարձրագոյն դասակարգի ֆուտբոլիստներն 21րդ եւ դարձի երկրորդ հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի կ'ունենան այս շաբաթավերջին, գազաթի ճակատում տեղի պիտի ունենայ վաղը՝ Կիրակի «Վալլաբրի»ի մէջ, ուր պարագուծի դիրքը գրաւող Արսենալ պիտի հիւրընկալէ Լիվերփուլը:

Նշենք, թէ նախանցեալ օր տեղի ունեցած դարձի առաջին հանգրուանի մրցումներուն (արդիւնքները տեսնել ստորեւ), Արսենալ աւելիով ամրապնդեց իր դիրքը, թէեւ անիկա թէ՛ մը դժուար յաղթանակ մը արձանագրեց, երբ 2 - 1 արդիւնքով յաղթական վերադարձաւ նախաւերջին դիրքը գրաւող Ուէսթ Պրոմուչի դաշտէն:

Լիվերփուլի համար, վաղուան այս մրցումը թէեւ կը նկատուի բաւական դժուար, սակայն անիկա պիտի փորձէ ան-

պայման յաղթանակ մը արձանագրել, նկատի ունենալով, որ անիկա իր կատարած վերջին ութ մրցումներուն յաղթանակ չէ կրցած արձանագրել:

Այժմ Արսենալին ինը կետով ետ մնացող Լիվերփուլ, որ կը գրաւէ հիւզերորդ դիրքը, վստահաբար պիտի չուզէ աւելիով նահանջել, ինչ որ պատճառ կրնայ դառնալ, որ անիկա ֆուտբոլիստներն տիտղոսին պայքարէն բաւական հեռունան:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէրլուի ժամանակացոյցով).

●ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Ասթօն Վիլա - Միտլըպոլ	17:00ից
Պլեյպլեյ - Ուէսթ Համ	17:00ից
Չարլթըն - Ուէսթ Պրոմուչի	17:00ից
Էվերթըն - Պոլթըն	17:00ից
Ֆուլհէմ - Մանչ. Սիթի	17:00ից
Լիծ - Չելսի	17:00ից
Մանչ. Եունայթըդ - Պիտերբուրօ	17:00ից
Սաութհեմթըն - Սանտըրլէնտ	17:00ից
●ՎԱԳԸ	
Նիւքսթըլ - Թոթեմհամ	16:00ից
Արսենալ - Լիվերփուլ	18:00ից

ՍՏՈՐԵՒԻ՝ 19րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Պիտերբուրօ - Էվերթըն	1-1
Պոլթըն - Նիւքսթըլ	4-3
Չելսի - Սաութհեմթըն	0-0
Լիվերփուլ - Պլեյպլեյ	1-1
Մանչեսթըր Սիթի - Ասթօն Վիլա	3-1
Միտլըպոլ - Մանչեսթըր Եունայթըդ	3-1
Սանտըրլէնտ - Լիծ	1-2
Թոթեմհամ - Չարլթըն	2-2
Ուէսթ Պրոմուչի - Արսենալ	1-2
Ուէսթ Համ - Ֆուլհէմ	1-1

21րդ հանգրուանի մրցումներուն այժմ դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	ԿԵՏ
1.- Արսենալ	42
2.- Չելսի	38
3.- Մ. Եունայթըդ	35
4.- Էվերթըն	34
5.- Լիվերփուլ	33
6.- Նիւքսթըլ	32
7.- Թոթեմհամ	32

ՊԱՍՔԵԹՊՈՒԼ

ԱՅՍՕՐ՝ Հ.Ս.Ը.Ս. - ՍԵՆ ԺՈՉԷՑ

Լիբանանի տղոց պատերազմի Բ. դասակարգի ֆուտբոլիստներն 7րդ հանգրուանի մրցումներուն, այսօր՝ Շաբաթ, Հ.Ս.Ը.Ս.ի տղոց ներկայացուցչական խումբը, Հ.Ս.Ը.Ս.ի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ կը հիւրընկալէ Սեն ժոչէֆը: Մրցումը տեղի պիտի ունենայ կեսօրէ ետք ժամը 5:00ին:

Եղանակի իր կատարած առաջին չորս մրցումներուն յաջողութեան չորս պարտութիւն կրելէ ետք Հ.Ս.Ը.Ս. ինքզինք վերագտնելով արձանագրեց երկու յաղթանակ, յաջողաբար Լիբանանի Բանակի Համալիրի մարզադաշտին (81-65) եւ Ֆիտաա Սայտային (72-66) դէմ: Կ'ակրնկալուի, որ այսօրուան մրցումին Հ.Ս.Ը.Ս.ի մարզիկները արձանագրեն այլ յաղթանակ մը, որպէսզի 2002 տարին աւարտեն յաղթանակով մը:

●ԼԵՆՆԱԼԻԲԱՆԱՆԻ նահանգէն ներս տեղի ունեցող տղոց Դ. դասակարգի ֆուտբոլիստներն 2րդ հանգրուանին իր կատարելիք վերջին մրցումին, Հ.Ս.Ը.Ս. Անթիլիաս, վաղը՝ Կիրակի Սաժէս ժրտյտէի դաշտին վրայ ժամը 3:00ին կը ճակատի ժէտերի դէմ: Ապահովելու համար Լիբանանի Դ. դասակարգի ֆուտբոլիստներն մրցաշարին իր տոմսը, Հ.Ս.Ը.Ս.ի մարզիկները վաղը յաղթանակէ այլընտրանք չունին:

OPTIONS - KASLIK

ՆՈՐ ՏԱՐՈՒՄԱՆ ԳԻՇԵՐԸ
ԱՆՅՈՒՅԵ ԽԱՆԴԱՎԱՌ ՄՅՈՒՆՈՐՏԻ ՄԵՋ
Մասնակցութեամբ՝ երգիչներ
ԷՄԻՐ ԵԱՉՊԵՆԻ ԵՒ ՇԱՏԻ ԻՊՐԱՇԻՄԻ
Ընկերակցութեամբ՝ արաբական պարուիի՝
ՍՈՒՐԱ ՍԱԼԱԵԻ
Բաց՝ ճաշ եւ խմիչք + բոթինոն
+ առաւօտեան ընէֆէ
Տեղերը ապահովելու համար դիմել
03 - 565142

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՏԱԼԱՍ ՄԱՎԵՐԻՔՍ ՅԱՐԳ ԼԱԻԱԳՈՅՆ ԽՈՒՄԲԸ

Էն. Պի. Էյ.ի երէկուան մրցումներուն, Միջառեւմտեան գօտիի (Արեւմտեան շրջան) պարագուծի դիրքը գրաւող Տալաս Մավերիքս, ոչ թէ միայն հանդիսացաւ նուազագոյն պարտութիւն կրող խումբը (չորս), այլ առաւելագոյն յաղթանակ արձանագրող խումբը, երբ արձանագրեց իր 24րդ յաղթանակը 83-81 արդիւնքով պարտութեան մատնելով Նի Օրլինսը՝ այս վերջինին դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին:

Յաղթական կազմին մարզիկներէն Տրքք Նովիթըքի նշանակեց 23 կէտ եւ 7 ռիպաւտ, իսկ անոր խմբակից՝ Սթիւ Նէշ, որ օր մը առաջ ընտրուած էր Քանատայի այս տարուան լաւագոյն աթլետը (տղոց պարագային)՝ 15 կէտ:

Ուաշինգթոնի մէջ, Ուիլյամս 87-82 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Տիթթոնի Փիւթթընի մէջ: Թէեւ ձերի Սթէյքհաուս (Ուիլյամս) նշանակեց 24 կէտ, իսկ անոր խմբակից Մայքըլ Ճորտըն՝ 17 կէտ, սակայն անոնց խումբը կրեց եղանակի իր 16րդ պարտութիւնը: Յաղթական կազմին մարզիկներէն՝ Ռիչարտ Հէմիլթըն նշանակեց 22 կէտ:

Երէկուան երրորդ եւ վերջին մրցումին Սիեթլ Սուփըրսոնիքս 97-88 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Թորոնթօ Ռեփթըրը: Կէրի Փէյթըն եղաւ Սուփըրսոնիքսի այս յաղթանակը կերտողներէն մէկը, նշանակելով՝ 35 կէտ, 7 ռիպաւտ եւ 7 էսիւք: Անոր խմբակից Ռաշըրտ Լուիս նշանակեց 20 կէտ:

Նշենք սակայն, թէ յաջորդաբար չորրորդ մրցումը ըլլալով Ռեփթըրը դաշտ ներկայացած էր առանց վէսս Քարթըրի եւ Անթոնիօ Տէլլիսի: Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը.

●ԱՅՍՕՐ	ՅԱԳԹ.	ՊԱՐՏ.
Սան Անթոնիօ Սիւրթը - Աթլանթա Հոքս	20	9
Ինտիսիան Փէյթըր - Զիլլիլէնտ Զաւալիքս	18	10
Միլուոքի Պաքս - Նի Ճըրզի Լէթց	18	10
Պոսթըն Սթէյքս - Մայքեմի Հիթ	16	14
Օրլանտօ Սէճիք - Մեմֆիս Կրիպլիք	12	16
Միչիգան Սթէյք - Շիքաքօ Պոլս	8	16
Նիւ Եորք Նիքս - Հիուսթըն Ռոքեթց	9	19
Լոս Անջելըս Զիլլիքս - Ֆէօնիքս Սանգ	20	8
Թորոնթօ Ռեփթըր - Կոլտըն Սթէյք Ուորիքս	19	9
Եուսթ Ճէզ - Փորթլէնտ Թրէյլ Պլէյթըր	18	12
●ՎԱԳԸ		
Աթլանթա Հոքս - Ուաշինգթըն Ուիլյամս	12	16
Պոսթըն Սթէյքս - Օրլանտօ Սէճիք	11	16
Նի Օրլինս - Ինտիսիան Փէյթըր	10	18
Սիւնտաքս Կոլտըն - Շիքաքօ Պոլս	8	20
Նիւ Եորք Նիքս - Տալաս Մավերիքս	6	24
Լոս Անջելըս Լէյքըր - Տեմպլը Նակեթց		
Ֆիլադելֆիա Սիւրթըր - Եուսթ Ճէզ		
Փորթլէնտ Թրէյլ Պլէյթըր - Սաքրամենթօ Զիլլիքս		
Կոլտըն Սթէյք Ուորիքս - Լոս Անջելըս Զիլլիքս		

Ստորեւ՝ դասաւորումը, շաբաթավերջին տեղի ունենալիք մրցումներուն նախօրեակին.

ԱՐԵՒԵՆԱՆ ՇՐՋԱՆ (Մոլայնտեան գօտի)	ՅԱԳԹ.	ՊԱՐՏ.
Նի Ճըրզի Լէթց	20	9
Պոսթըն Սթէյքս	18	10
Ֆիլադելֆիա Սիւրթըր	18	10
Օրլանտօ Սէճիք	16	14
Ուաշինգթըն Ուիլյամս	12	16
Նիւ Եորք Նիքս	8	16
Մայքեմի Հիթ (Կեդրոնական գօտի)	9	19
Ինտիսիան Փէյթըր	20	8
Տիթթոնի Փիւթթըն	19	9
Սան Անթոնիօ Սիւրթըր	18	12
Նի Օրլինս	18	12
Միլուոքի Պաքս	12	15
Աթլանթա Հոքս	11	16
Շիքաքօ Պոլս	10	18
Թորոնթօ Ռեփթըր	8	20
Զիլլիլէնտ Զաւալիքս	6	24

ԱՍՆՈՐԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԲԵՐԸ

Հ.Ս.Ը.Ս.ՎԱԿՆԻՆ

«ՊԱՏՈՒԹԻՒՆ
ԸԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴԿԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ»
3 ՀԱՏՈՐՆԵՐԸ

Լաթակազմ իւրաքանչիւր հատորին փոխարժէքն է 25 տոլար:

Ամանորի առիթով Ա., Բ. եւ Գ. հատորները միասնաբար՝ 60,000 լիբ. ոսկի:

Ա. եւ Բ. հատորներուն վճարման հետ յանձնելի, Գ. հատորը մատուց տակ է յանձնելի հրատարակութեան անմիջապէս ետք:

Ստանալ՝ Համագայիցի գրախոնորէն, Հ.Ս.Ը.Ս.ի կեդրոնատեղիէ կամ հեռաձայնելով՝ 01-260924 եւ 04-714049 թիւերուն:

ՈՒՆԱՐՈՒԹԻՒՆ. - Հիմ բաժանորդներու պարագային Գ. հատորին քաճառագրութիւնը սկսած է:

PHOTO NERSES

ԱՐԱԳ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպուած են հասած ԱՐԿԻԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով՝ որակատու եւ զանազան չափերով:

Ստանձնում՝ 20 վայրկեանէն:

Լուսանկարներ կ'արձանագրենք CD-ի եւ կամ FLOPPY տիպի վրայ:

Cameraներու ճիշտ հաւաքում, ալպոմներ եւ նկարի շրջանակներու ընտիր տեսակածի:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիններով:

Պուրճ Համուտ, Քաղաքապետարանի փողոց, «Սանթըր Արիս»-ի դիմաց, Հեռ. 01-261858 եւ 01-255992

ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԶԵՉԵՆԻՈՅ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ. ԱԲԵԼԻ ՔԱՆ 40 ՉՈՐ

Չեչենիոյ շրջանային մայրաքաղաք Կրոպուհի մէջ աւելի քան 40 հոգի սպանուած է երէկ, երբ չեչենի կինեալներ, պայթուցիկ սիւթերով լեցուն երկու ինքնաշարժներ պայթեցուցած են Ռուսիոյ ի նպաստ կողմնորոշուած չեչեն կառավարութեան կեդրոնատեղիին մէջ՝ անձնասպանական գործողութեամբ մը:

Չեչենիոյ ներքին գործոց նախարար Ռուսլան Յաքաւե յայտնած է, թէ բեռնատար փոխադրակառքի մը եւ «ճիփ»ի մը օգտագործութեամբ, փինեալները անցած են պատնէշ մը եւ ըջած դէպի կառավարութեան շէնքը:

Ռուսիոյ Պետական Տումային մէջ Չեչենիոյ երեսփոխան Ալյանպե Սալխանով յայտնած է, թէ 41 ԿԻ արձանագրուած է: Կան տասնեակներով վիրաւորներ:

Ո՛չ չեչեն վարչակարգին Ռուսիոյ ի նպաստ կողմնորոշուած նախագահ Ահմետ Քատիրով ոչ այլ հանրապետութեան վարչապետը՝ Միխայիլ Պապիչ, պայթուումներուն ընթացքին շէնքին

մէջ կը գտնուէին: Քատիրով չեչեն ըմբոստ նախագահ Ալյան Մասիատովը ամբաստանած է՝ ըսելով, թէ վստահ է, որ ան կապակերպած է «այս ողբերգութիւնը»:

Ան խոստովանած է, որ չեչեն ըմբոստները «կ'իշխեն Կրոպուհի մէջ»:

Ըստ պետական դատախազ Վալերի Քրաւչենքոյի, գրեթէ միաժամանակ տեղի ունեցած պայթումները շուրջ մէկ թոն ԹԵ. ԷՆ. ԹԵ.Ի կը համապատասխանէին:

Պայթումներէն ետք, ռուսական ապահովութեան ուժերը դէպի Կրոպուհի բոլոր անցքերը փակած են, իսկ Մոսկուայի շրջանին մէջ, բանալի շէնքերու շուրջ ապահովութեան միջոցառումներուն թափ տրուած է:

Ըմբոստ ներկայացուցիչ Ահմետ Չաքաւե Լոնտոնէն յայտնած է, որ Մասիատով որեւէ կապ չունի դէպքերուն հետ:

(ԱՖՓ)

ՏԵՆՔԹԱՇԻ ՀԱՄԱՐ ԻՐ ԴԵՄ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅԸ՝ «ՊՈՌՉՏՈՒՔ»

ՆԻԿՈՍԻԱ, 27 (ԱՖՓ).- Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ Ուրբաթ օր «խանդավառութիւն» եւ «պոռչըրտուք» կոչած է թուրք կիպրացիներու կողմէ բողոքի աննախընթաց ցոյց մը՝ իր ղեկավարութեան եւ բանակցութեան մէջ ծայրայեղ իր կեցուածքին դէմ:

Կղզիին վերամիացման ի խնդիր յոյն կիպրական կողմին հետ տեղի ունեցող բանակցութեան գործընթացը «համբերութեան, պոռչըրտեան եւ տրամաբանութեան» կարիքը ունի, յայտնած է Անգարայի մէջ Տենքթաշ «Կիւրիստի» մայրասպիւրի

կայանին: «Կարելի չէ այդ անուր ընել» իսկողանաբար եւ պոռչըրտութեամբ եւ պոռչըրտութեամբ, ըսած է ան՝ ակնարկելով Հինգշաբթի օրուան մէկ ցոյցին, որ հիւսիսային կիպրոսի մէջ ցարդ տեղի ունեցած մեծագոյնն էր:

Շուրջ 30 հազար ցուցարարներ դատապարտուած էին Տենքթաշը եւ անոր կեցուածքը եւ պահանջած միանալ Ե. Միութեան:

Տենքթաշ մայրասպիւրի կայանին ըսած է, թէ ՄԱԿի ծրագիրը թուրք կիպրացիներուն միայն «պարզարեւ» փոքրամասնութեան հանգամանք կու տայ եւ չ'ապահովել, թէ անոնք յոյն կիպրացիներուն հետ հաւասար են:

Կիպրոսի նախագահ Կլաֆքոս Քլերիտիսի հետ բանակցութիւնները պիտի վերսկսին յառաջիկայ ամսուան սկիզբը:

ՔԼՈՆ ԱՂՋՆԱԿ ՄԸ

Քլոնի ստեղծումի ճամբով աղջնակ մը ծնած է Հինգշաբթի օր, ըստ Ռաբիխան զանգուի անդամ եւ գիտնական Պրիմիթ Պուսաբլիի, որ նախագահ է մարդկային քլոններու ստեղծումի Քլոնէյտ ընկերակցութեան:

Նկատի ունենալով, որ աղանդին անդամներուն կողմէ քլոն առաջին մարդու ծնունդը իրականացնելու ճիգերը գաղտնի պահուած են, երէկ անմիջապէս կարելի չէ եղած գիտական անկախ աղբիւրներէ հաստատել, թէ երեխան իսկապէս քլոն մըն է:

Ռաբիխանները, որոնք կ'ըսեն, թէ աշխարհի տարածքին 55 հազար հետեւորդ ունին, կը հաւատան, որ երկրագունդին վրայ կենքը հաստատուած է արտերկրացիներու կողմէ, որոնք թուրք սկաւտակներով հասած են 25 հազար տարի առաջ եւ թէ մարդիկ «քլոնիկ» ճամբով ստեղծուած են:

(ԱՖՓ)

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆԸ

ԳԱՀԻՐԷ, 27 (ԱՖՓ).- Եգիպտոս եւ Արաբական Լիկան Ուրբաթ օր խիստ ռոնով դատապարտեցին Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի մէկ ամբաստանութիւնը, ըստ որուն, Իրաք հաւաքական քանդուի կէնքեր Սուրիա «կը փախցնեն»՝ խաբէլու համար ՄԱԿի քննիչները:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմետ Մահեր ըսաւ, որ Շարոնի խօսքերը պատասխանի մը արժանի չեն, որովհետեւ անհիմն են: Ան աւելցուց, որ Շարոն այս յայտարարութիւնը կատարեց հաւանաբար նկատի ունենալով ընտրութիւնները, կամ ծածկելու համար պաղեստինեան շրջաններուն հանդէպ որդեգրած միջոցառումները: Մահեր ըսաւ նաեւ, որ Իսրայէլ աջ ու ձախ ամբաստանութիւններ կ'ուղղէ՝ առանց սակայն պատնէք հաստատող փաստեր ներկայացնելու:

ՓՈՒՆԿԵԱՆԿ ՅԱՍՏԱՏ ԿԸ ՄՆԱՅ ՄԱԿԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ ԱՐՏԱՔՍԵԼՈՒ ԻՐ ՈՐՈՇՈՒՄԻՆ ԿՐԱՅ

Հիւսիսային Քորէա երկէ յայտնած է, թէ ՄԱԿի քննիչները պիտի արտաքսէ եւ վերստին աշխատանքի պիտի լծէ կէնքերու համար օգտագործելի փոխարկի միջոցներուն մէկ գործարանը՝ քորէական թերակղզիին վրայ կորիպի մարզին մէջ տազնապին նոր վերելքով:

Փոնկեանկի նորագոյն որոշումը կը յաջորդէ Հիւսիսային Քորէայի կարգ մը քայլերուն: Անկախ ՄԱԿի հսկող սարքերը «անգործ» դարձուցած է եւ կորիպային կեդրոնները վերաբացած: Անոնց աշխատանքը անցնող 8 տարիներուն ստանձման մնացած է՝ կորիպային Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան հակակշիռն ներքեւ:

Հիւսիսային Քորէայի նորագոյն քայլը մարտահրաւիր կ'ուղղէ ամերիկեան մէկ պահանջին, որ Փոնկեանկի հրաժարի եւ արտօնէ գործակալութեան քննիչներուն, որ յուսանկարչական ինստիտուտը մեքենաները փոխարինէ եւ վերափակէ գործարանը:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ...

Շարունակուած Ա. Էջէն

թացքին: Իսրայէլեան բանակը Հինգշաբթի օր ինը պաղեստինցիներ սպաննած էր Կապայի եւ Այսրյորդանանի մէջ տեղի ունեցած բախումներու ընթացքին: Բանակը ձեռնարկած է լայնածիր արշաւի մը քայլերուն եւ քանդելու համար ահաբեկչական շարժումներուն ենթակառուցելը: Բանակը յաջողեցաւ սպաննել ծայրայեղական պաղեստինցիներ օգտագործելով գերեզմանները կրակմար: Բանակին որդեգրած միջոցառումները մտահոգութիւն կը պատճառեն, որովհետեւ գրեթէ ամիսէ մը ի վեր մեղմացած պաղեստինեան յարձա-

կումները կրնան վերստին թափ ստանալ եւ ծայրայեղական շարժումներ անգամ մը եւս յարձակումներու թիրախ կը դարձնեն Իսրայէլեան քաղաքները: Իսրայէլեան ժիհատ, որուն պատասխանատուներէն մէկը սպաննուած էր Հինգշաբթի օր Ժենիւի մօտ, երէկ երդուեց անպատեհ չձգել անոր սպանութիւնը: Իսկ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասեր Արաֆատի խորհրդարանու նախի Ապու Ռուտայնա ըսաւ, որ Իսրայէլի վարչապետը Յունուարի ընտրութիւնները նկատի առնելով է, որ կը վերադառնայ պաղեստինեան շրջանները պատժելու քաղաքականութեան: Այսրյորդանանի գաղտնի սպասարկութեանց պետ Թալալ Տուրքաթ, իր կարգին, շեշտեց, որ Շարոն խիստ միջոցառումներ կ'որդեգրէ՝ սիրաշահելու համար աջակողմեան իսրայէլացիներուն քունները: Տուրքաթ աւելցուց, որ ընտրութիւններուն համար Շարոն կ'անտեսէ աւելի քան յոթ շաբթուան համեմատական խաղաղութիւնը:

Բանակը երէկ պաղեստինեան շրջաններուն մէջ շարունակեց ձեռնարկութիւններու սովորական երկույթը: Ժենիւի մէջ ձեռնարկուեցան իսրայէլական խմբակներու 15 հետեւորդներ: Բանակին մէկ բանքերը յայտնեց, որ Նապոլուսի մօտ ձեռնարկուած է պաղեստինցի մը, որ ըստ իսրայէլացիներու, անձնասպանական գործողութեան մը կը պատրաստուէր: Երկու ուրիշներ ձեռնարկուեցան Բեռլինի մէջ եւ Ասքար գաղթականային մօտ:


Միւս կողմէ, Համասի հիմնադիր ղեկավար շէյխ Ահմետ Եասին երէկ յայտարարեց, որ իրական պետութիւնը հապի քառորդը մը եւս կրնայ գոյատեւել:

(ԱՖՓ)

galerie MERRY CHRISTMAS

PIERROT

Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans



galerie

PIERROT

Cadeau Special Noël pour chaque achat

Liste de Naissance et de Bâpteme

Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ARMIMPEXBANK

The WESTERN UNION Agent in ARMENIA

WESTERN UNION offers:

"The fastest way to send money worldwide".

Receivers can pick up their money just minutes after it is sent.

82,000 agent locations in more than 181 countries are your service.

WESTERN UNION MONEY TRANSFER

ARMIMPEXBANK

2, V. Sargsyan Str., Tel. (3741) 58 93 67

ԿԱՂԱՆԴԸ ԴԻՄԱԴՈՐԵԼ ԿԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳԻՆԻՈՎ

Նուիրելու համար բարեկամներու եւ յաճախորդներու



- 1- ԱՅՅԻՐԻ ԳՈՆԵԱՔ՝ 20 տարուայ նուիրելու յատուկ ծրագրով:
- 2- VEDI ALCO արտադրութեան 15 տեսակ անուրով գինի նաեւ փայտ ստեղծով:
- 3- Գոնեաք գանգաւ անուրով ստեղծով:
- 4- Գինի KHORAN 3 խոր՝ նուիրելու տուփով:
- 5- Գոնեաք Souvenir ԱՂԹԱՍԱՐ 10տարուայ:

VAK Trading Հաստ. Հեռ.: 03/626177 - 03/773609
Եւ UNIVERSE վաճառատուն, Փօլիկարպոս. «Սարդարապատ» շէնք

New Year's Eve Program 2003

REGENCY PALACE HOTEL

ADMA-LEBANON

Jade Ballroom

Join us in ringing in the New Year of the Jade Ballroom, where you can enjoy your evening with the most wanted singer/composer in Lebanon MELHEM BARAKET, along with an exciting entertaining atmosphere. Be there!!

ՀԵՏԱՐՍԻ ՓԱԼԱՏ

Celebrate the lovely musical ambience in the greatest and most delightful surrounding ever at the Caesar's Palace with ZEIN EL-OMER, Nisrine Bachaalany and Jihad Farah. Don't miss it!! Organized by Stephan Elayyad

Giverny

The musical ambience is in the air at the Giverny European restaurant on New Year's Eve. Be there to live this lovely atmosphere along with Nadim & his band who will definitely keep you dancing all night long.

LONG YIN

Dine and savor real Chinese food in a peaceful musical ambience on New Year's Eve, at the best chinese restaurant in town the Long Yin, with our one-man show Andre who is going to keep you happy throughout the evening.

For further information please call the REGENCY PALACE HOTEL: Tel & Fax: (09) 854 000 (09) 854 854 E-mail: f&b@regencypalace.com.lb Home page: http://www.regencypalace.com.lb